ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի հուլիսի 18-ից 21-ը
ՌԴ ք. Սամարա գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Հասմիկ Մինասյան - ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (Այսուհետ՝ ՀՀ ՊԵԿ) Հետբացթողումային հսկողության վարչության (Այսուհետ՝ ՀՀՎ) կամերալ մաքսային ստուգումների բաժնի պետի տեղակալ

Հայկազ Քոչարյան - ՀՀ ՊԵԿ ՀՀՎ վարչության մաքսային տեղեկությունների և ռիսկերի վերլուծության բաժնի գլխավոր մաքսային տեսուչ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

ՌԴ, ք.Սամարա, հուլիսի 18-ից 21-ը

3. Հրավիրող կողմը՝

ՌԴ Դաշնային մաքսային ծառայություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր՝ մասնակցել ԵԱՏՄ անդամ երկրների Մաքսային ծառայությունների միավորված կոլեգիային կից ապրանքների բացթողումից հետո մաքսային հսկողության զարգացման և կիրառման աշխատանքային խմբի հերթական երրորդ եռամսյակում նշանակված նիստին:

Հանդիպմանը մասնակցում էին աշխատանքային խմբի ՀՀ, ՌԴ, Բելառուսի, Ղրղզստանի և Ղազախստանի ներկայացուցիչները:

Հանդիպման ընթացքում տեղի ունեցավ օրակարգով նախատեսված հարցերի քննարկում:

5. Քննարկված թեմաները՝

Նիստի օրակարգի համաձայն քննարկվեցին՝

ԵԱՏՄ անդամ երկրների մաքսային ծառայությունների կողմից մաքսային հսկողության շրջանակներում ներդրվող և կիրառվող ինովացիոն տեխնոլոգիաները,

ՌԴ ԴՄԾ կողմից ներկայացվեց մաքսային մարմինների շարժական (մոբիլ) խմբերի գործառույթները, ինչպես նաև ներկայացվեցին մոբիլ խմբերի կողմից մաքսային հսկողության իրականացման ժամանակ օգտագործվող հատուկ տեխնիկան և միջոցները,

Քննարկվեցին նաև՝ աշխատանքային խմբի կողմից ընդունված որոշումների կատարման, ինչպես նաև աշխատանքային խմբի 2024 թվականի նիստերի կազմակերպման հետ կապված հարցեր:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Աշխատանքային խմբի անդամների միջև տեղի ունեցավ տեղեկատվության փոխանակում՝ մաքսային մարմինների հետբացթողումային հսկողության շրջանակներում ապրանքների և տրանսպորտային միջոցների հսկողության ժամանակ արդեն իսկ կիրառվող, ինչպես նաև ներդրման փուլում գտնվող ինովացիոն տեխնոլոգիաների վերաբերյալ:

Նիստի շրջանակներում մասնակիցները լսեցին ՌԴ ԴՄԾ ներկայացուցիչների տեղեկատվությունը շարժական (մոբիլ) խմբերի գործառույթների վերաբերյալ, ծանոթացան այն նորմատիվ իրավական ակտերին, որոնց համաձայն գործում են այդ խմբերը: Ներկայացվեց նաև մոբիլ խմբերի տեխնիկական հագեցվածությունը՝ հատուկ տեխնիկան և միջոցները, ինչպես նաև խմբերի գործունեության արդյունքում արձանագրված արդյունքները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման արդյունքում ստորագրվեց ԵԱՏՄ անդամ երկրների Մաքսային ծառայությունների միավորված կոլեգիային կից ապրանքների բացթողումից հետո մաքսային հսկողության զարգացման և կիրառման աշխատանքային խմբի նիստի 20.07.2023 թիվ 38 արձանագրությունը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Նիստի արդյունքում ստորագրված արձանագրության համաձայն որոշվեց՝

- Ընդունել ի գիտություն ՌԴ ԴՄԾ կողմից ներկայացված տեղեկատվությունը,
- Աշխատանքային խմբի քարտուղարին ներկայացնել առաջարկություններ՝ 04.04.2018 թիվ 26/9 «Հետբացթողումային հսկողություն իրականացնող ստորաբաժանումների աշխատանքի արդյունավետության գործակցի հաշվարկի մեթոդաբանության հաստատման» ԵԱՏՄ երկրների մաքսային ծառայությունների միասնական կոլեգիայի որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին առաջարկություններ՝ մինչև 15.08.2023թ.,
- Ներկայացնել առաջարկություններ՝ աշխատանքային խմբի 2024 թվականի միջոցառումների պլանի, ինչպես նաև առկա ձևաչափով նիստի անցկացման վերաբերյալ՝ մինչև 15.08.2023թ:

Գործուղման արդյունքում ԵԱՏՄ անդամ երկրներում հետբացթողումային հսկողության իրականացման ժամանակ կիրառվող փորձը և ձեռք բերված տեղեկատվությունը կներդրվի ՀՀՎ-ի աշխատանքների և գործառույթների արդյունավետության բարձրացման և հետագա զարգացման գործընթացներում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

25.07.2023թ.